Հանձնարարվել է
ՀՀ ԱԱՏՄ կառավարման խորհրդի
2020թ. հունվարի «29» N 01-Լ որոշմամբ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(2019 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների գործունեության ուսումնասիրության արդյունքների հիման վրա)

1. Հաշվի առնելով վարչական վարույթի շրջանակներում գործի քննության վերաբերյալ Տեսչական մարմնի կողմից հասցեատիրոջը ոչ պատշաճ ծանուցելու և առանց վերջինիս ներկայության գործի քննություն անցկացնելու կրկնվող դեպքերը, որի արդյունքում վարչական ակտի հասցեատերը զրկվում է իր իրավունքներն իրացնելու հնարավորությունից և հետագայում բողոքարկում է ընդունված վարչական ակտը, առաջարկվում է խստագույնս պահպանել օրենսդրությամբ սահմանված՝ գործի քննության մասին հասցեատիրոջը պատշաճ ծանուցելու պահանջը, գործի քննությունն անցկացնել միայն պատշաճ ծանուցված լինելու մասին տվյալների առկայության դեպքում:

2. Տնտեսավարող սուբյեկտների անիրազեկությամբ պայմանավորված բողոքարկումները կանխելու նպատակով՝ վարչական վարույթի գործընթացում, մասնավորապես՝ գործի քննության ընթացքում, ապահովել տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացումը (Տեսչական մարմնի կանոնադրության 11-րդ կետի 13-րդ ենթակետ), իրազեկել, որ արձանագրված խախտումների վերացումը հիմք չէ այդ խախտումների համար վարչական տույժ տուգանք նշանակելու մասին որոշումն անվավեր ճանաչելու համար:

3. Սանիտարական նորմերի և կանոնների խնդրահարույց պահանջներով պայմանավորված բողոքարկումների ռիսկը նվազեցնելու նպատակով՝ լիազոր մարմնի հետ կազմակերպել քննարկում սանիտարական նորմերի և կանոնների,

մասնավորապես՝ «Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների)» N 2.III.1 սանիտարական նորմերի և կանոնների վերաբերյալ:

4. Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտի ամբողջական վերահսկողությունն ապահովելու նպատակով լիազոր մարմնին առաջարկություն ներկայացնել՝ «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական կանոններ և նորմեր»-ը հնարավորինս սեղմ ժամկետում մշակելու և հաստատման ներկայացնելու վերաբերյալ:

5. Կազմակերպել քննարկում վարչական վարույթների գործընթացում հայտնաբերված խախտումների վերաբերյալ՝ դրանց հետագա կրկնություններից խուսափելու նպատակով:

6. Տեսչական մարմնի հիմնական մասնագիտական ստորաբաժանումների կողմից մշտապես հետևել Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներին առնչվող նոր իրավական ակտերի հրապարակմանը և «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված կարգով ապահովել դրանց վերաբերյալ իրազեկումը տնտեսավարող սուբյեկտներին: